ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ • 1930

10 APR 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՅԵՐԵՎԱՆ • 1939

ИНСТРУКЦИЯ
О ПРОВЕДЕНИИ ВЫБОРОВ РУКОВОДЯЩИХ ПАРТИЙНЫХ ОРГАНОВ

Ереван, 1939

1-4456 գր

1. Կուսակցական ղեկավար որգանների ընտրությունները, կուսակցության կանոնադրությանը համապատասխան, անց են կացվում սկզբնական, շրջանային և քաղաքային կուսակցական կազմակերպություններում՝ տարեկան մեկ անգամ, ոկրուգային, մարզային, յերկրամասային և հանրապետական կուսկազմակերպություններում՝ մեկ և կես տարին մեկ անգամ:

2. Համկ(բ)Կ Կանոնադրության § 23-ին համապատասխան՝ կուսակցական որգանների ընտրությունների ժամանակ արգելվում է ցուցակով քվեարկելը: Քվեարկությունը պետք է կատարվի ըստ առանձին թեկնածությունների, ընտրվորում կուսակցության բոլոր անդամների համար ապահովվում է թեկնածուներին բացարկելու և վերջիններիս քննադատելու անսահմանափակ իրավունք: Ընտրությունները կատարվում են թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկությամբ:

3. Փակ (գաղտնի) քվեարկությամբ ընտրվում են՝

ա) սկզբնական կուսակցական կազմակերպություններից շրջանային, քաղաքային կուսակցական կոնֆերենցիաների դելեգատները և շրջանային, քաղաքային, ոկրուգային կուսակցական կոնֆերենցիաներից մարզային, յերկրամասային կուսակցական կոնֆերենցիաների ու Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների համագումարների դելեգատները.

բ) սկզբնական և ցեխային կուսկազմակերպություն-

ների բյուրոների անդամները, ինչպես և քարտուղարները (այնտեղ, վորտեղ բյուրո չկա) և նրանց տեղակալները, կուսակցական խմբերի կուսկազմակերպիչները, շրջկոմների, քաղկոմների, ոկրուգկոմների, մարզկոմների, յերկրկոմների և Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների Կենտկոմների անդամները և վերատուգիչ հանձնաժողովների անդամները:

4· Սկզբնական կուսկազմակերպությունների քարտուղարների և նրանց տեղակալների ընտրությունները սկզբնական կուսկազմակերպությունների բյուրոներում և շրջկոմների, քաղկոմների, ոկրուգկոմների, մարզկոմների, յերկրկոմների, Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների Կենտկոմների քարտուղարների և բյուրոների անդամների ընտրությունները կուսակցության համապատասխան կոմիտեների պլենումներում կատարվում են բաց քվեարկությամբ:

5· Սկզբնական կուսակցական կազմակերպություններում սկզբնական կուսկազմակերպությունների բյուրոների կամ քարտուղարների (այնտեղ, վորտեղ բյուրո չկա) և նրանց յերկու տեղակալների ընտրությունները կատարվում են կուսակցական ընդհանուր ժողովներում:

Հազար կոմունիստից ավելի ունեցող սկզբնական կուսակցական կազմակերպություններում գործարանային կամ ժողկոմատային կուսակցական կոմիտեների ընտրությունները կարող են կատարվել, յուրաքանչյուր առանձին դեպքում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի թույլտվությամբ, ընդհանուր-գործարանային կամ ժողկոմատային կուսակցական կոնֆերենցիաներում: Ընդհանուր-գործարանային կամ ժողկոմատային կուսակցական կոնֆերենցիաների ներկայացուցչական նորմաները հաստատում է կուսակցության քաղկոմը, ռայկոմը:

Յեվրային կուսակցական կազմակերպությունների բյուրոների և քարտուղարների (այնտեղ, վորտեղ բյուրո չկա), նույնպես և կուսակցական խմբերի կուսկազմակերպիչների ընտրությունները կատարվում են սկզբնական կուսկազմակերպության բյուրոյի կամ կուսակցության գործարանային, ժողկոմատային կոմիտեն ընտրելուց հետո:

6· Շրջանային կուսակցական կազմակերպություններում կուսակցության շրջկոմների ընտրությունները կատարվում են շրջանային կուսակցական կոնֆերենցիաներում կամ, մարզկոմի, յերկրկոմի, Միութենական հանրապետության կոմկուսակցության Կենտկոմի հետ համաձայնեցնելով, ՀամԿ(բ)Կ անդամների ընդհանուր-շրջանային ժողովներում:

Քաղաքային, ոկրուգային, մարզային, յերկրամասային կուսակցական կազմակերպություններում կուսակցության քաղկոմների, ոկրուգկոմների, մարզկոմների, յերկրկոմների ընտրությունները կատարվում են համապատասխան քաղաքային, ոկրուգային, մարզային, յերկրամասային կուսկոնֆերենցիաներում, իսկ հանրապետական կուսկազմակերպություններում Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների Կենտկոմների ընտրությունները՝ Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների համագումարներում:

Շրջանային, քաղաքային, ոկրուգային, մարզային, յերկրամասային կուսկոնֆերենցիաների և Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունները

ների համագումարների ներկայացուցչական նորմաները սահմանում են համապատասխան շրջկոմները, քաղկոմները, ոկրուգկոմները, մարզկոմները, յերկրկոմները, Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների Կենտկոմները:

Ռայոնական բաժանում ունեցող խոշոր քաղաքային կուսակցական կազմակերպություններում մարզային, յերկրային, կուսակցական կոնֆերենցիաների և Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների համագումարների դելեգատների ընտրությունները, մարզկոմների, յերկրկոմների, Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների Կենտկոմների վորոշմամբ, կարող են կատարվել անմիջականորեն ռայոնական կուսակցական կոնֆերենցիաներում:

7· Կուսակցական ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի նախագահությունը և ուրիշ ղեկավար որգաններ ընտրվում են բաց քվեարկությամբ՝ այն թվով, վոր ինքը ժողովը, կոնֆերենցիան, համագումարն և վորոշում:

Կուսակցական կոնֆերենցիայի, համագումարի ղեկավար որգանների համար կարող են ընտրվել նաև խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող դելեգատներ:

8· Կուսակցական ղեկավար որգանների ընտրությունները կատարվում են համապատասխան կուսակցական որգանի և վերատուգիչ հանձնաժողովի հաշվետու ղեկուցումը ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի կողմից լսելուց, քննարկվելուց և վորոշում ընդունվելուց հետո:

Կուսակցական որգանների հաշվետվությունները նախապես քննարկվում են կուսակցության համապա-

տասխան կոմիտեների պլենումներում, իսկ սկզբնական կուսակազմակերպություններում՝ սկզբնական կուսակազմակերպությունների բյուրոներում:

Կուսակցության կոմիտեների պլենումներում, սկզբնական կուսակցական կազմակերպությունների բյուրոներում հաշվետու ղեկուցումները նախապես քննարկելն այդ կուսակցական որգանների անդամներին չի զրկում կուսակցական ժողովներում և կոնֆերենցիաներում կուսակցական կազմակերպության ղեկավարությունը քննադատելով հանդես գալու իրավունքից:

9· Ընտրությունները կատարելուց առաջ կուսակցական ժողովը, կոնֆերենցիան, համագումարը սահմանում է ընտրվող կուսակցական որգանների անդամների և թեկնածուների թիվը:

Կուսակցական շրջանային սակավաթիվ կազմակերպություններում, վորտեղ շրջկոմներն ընթացիկ աշխատանքի համար շրջկոմի բյուրո չեն ընտրում, այլ անմիջականորեն ղեկավարում են շրջանային կուսակցական կազմակերպության ամբողջ աշխատանքը, շրջկոմների անդամների թիվը չպետք է 9-ից անցնի: Այդ շրջկոմների ցուցակները սահմանում են մարզկոմները, յերկրկոմները, Միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների Կենտկոմները:

10· Կուսակցական որգանի նոր կազմի համար թեկնածություններ առաջադրվում են կուսակցական ժողովների մասնակիցների, կոնֆերենցիաների, համագումարների դելեգատների կողմից և պերսոնալ կերպով քննարկվում են անմիջականորեն կուսակցական ժողովում, կոնֆերենցիայում, համագումարում (կու-

սակցական որդանի անդամության և թեկնածության համար առանձին-առանձին)։

Առաջադրված բոլոր թեկնածությունները պերսոնալ կերպով քննարկելու հետևանքով թեկնածությունների ցուցակ է կազմվում՝ ընտրությունները վաղ (գաղտնի) քվեարկությամբ կատարելու համար։

Ժողովի ամեն մի մասնակցողի, կոնֆերենցիայի, համագումարի ամեն մի դելեգատ, վորը ցանկանում է կուսակցական որդանի կազմի համար այս կամ այն թեկնածությունն առաջադրել, Ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի նախագահությունը ձայն է տալիս՝ թեկնածության մասին առաջարկ մտցնելու համար և այդ առաջարկությունը հիմնավորելու համար։

Եթե առաջարկություն է ստացվում թեկնածություններ առաջադրելը դադարեցնելու մասին, այդ դեպքում Ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի նախագահությունն այդ առաջարկությունը դնում է Ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի լուծմանը, և բաց քվեարկությամբ վճռվում է նոր թեկնածությունների գրանցումը շարունակելու կամ դադարեցնելու հարցը։

Նոր ընտրվող կուսակցական կոմիտեի կազմի համար կարող են առաջադրվել կուսակցական կոնֆերենցիայում, համագումարում խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող դելեգատների թվից, նույնպես և կուսակցության այն անդամների թվից, վորոնք տվյալ կուսակցական կոնֆերենցիայի, համագումարի դելեգատներ չեն։

11. Շրջանային, քաղաքային, ոկրուգային, մարզային, յերկրամասային կուսակցական կոնֆերենցիաներում և Միութենական հանրապետությունների կոմ-

կուսակցությունների համագումարներում, կոնֆերենցիայի կամ համագումարի նախագահության վորոշմամբ, կարող են դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցություններ գումարվել՝ կուսակցական որդանի նոր կազմի համար նախապես թեկնածություններ նշելու։

Դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցության նշած թեկնածությունները կուսակցական կոնֆերենցիայի, համագումարի նիստում առաջադրվում են այդ խորհրդակցության անունից և պերսոնալ կերպով, ընդհանուր կարգով, քննարկվում կուսակցական կոնֆերենցիայի, համագումարի պլենար նիստում։

Կուսակցական որդանի նոր կազմի համար դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցության մեջ նախապես թեկնածություններ նշելը չի սահմանափակում դելեգատների իրավունքները հենց կուսակցական կոնֆերենցիայում, համագումարում թեկնածություններ նշելու և քննարկելու։

12. Կուսակցական որդանի կազմի համար առաջադրված բոլոր թեկնածությունների քննարկումը կատարվում է այն կարգով, ինչպես նրանք գրանցված են յեղել, ինչ կարգով վոր դրանք ստացել է կուսակցական Ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի նախագահությունը։

Թեկնածությունների պերսոնալ քննարկման ժամանակ պետք է ապահովված լինի կուսակցական որդանի կազմի համար առաջադրված թեկնածությունները, նույն թվում և դելեգացիաների ներկայացուցիչների խորհրդակցության նշած թեկնածությունները բացարկելու անսահմանափակ իրավունք, այսինքն՝

յուրաքանչյուր դելեգատ կարող է բացարկել առաջադրված թեկնածուներից ինչքանը վոր ուզի, և առաջադրված ամեն մի թեկնածության շուրջը կարող են արտահայտվել անսահմանափակ թվով դելեգատներ ինչպես «Թեր», այնպես և «դեմ»:

Յեթե առաջարկություն ստացվի այս կամ այն թեկնածության քննարկումը դադարեցնելու մասին, այդ դեպքում ժողովը, կոնֆերենցիան, համագումարը բաց քվեարկությամբ վճռում է տվյալ թեկնածության քննարկումը դադարեցնելու կամ շարունակելու հարցը:

Կուսակցական կոնֆերենցիային խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցող դելեգատները և Համկ(բ)կ անդամության թեկնածուներն սկզբունական կուսակազմակերպությունների ժողովներում ու շրջանային կուսակցական ժողովներում, կուսակցական որդանների կազմի համար առաջադրված թեկնածուների քննարկման ժամանակ, ոգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

13. Այն թեկնածությունները քննարկելուց հետո, վորոնց դեմ բացարկներ են ստացվել, անհրաժեշտ է ամեն մի առանձին դեպքում բաց քվեարկության կարգով վճռել տվյալ թեկնածությունը այն ցուցակի մեջ մտցնելու կամ չմտցնելու հարցը, վոր կուսակցական ժողովը, կոնֆերենցիան, համագումարը կազմում է կուսակցական որդանների ընտրությունները փակ (գաղտնի) քվեարկությամբ կատարելու համար:

Ընդամենն անհրաժեշտ է հաշվել ինչպես «բացարկելուն Թեր», այնպես և «բացարկելուն դեմ» տրված բոլոր ձայները:

Այն թեկնածությունները, վորոնց դեմ բացարկներ չեն ստացվել, բաց քվեարկության չեն դրվում և մտցվում են ընտրությունները փակ (գաղտնի) քվեարկությամբ կատարելու ցուցակի մեջ:

14. Քվեարկության արդյունքները հաշվելու համար կուսակցական ժողովը, կոնֆերենցիան, համագումարը կուսակցական դեկավար որդանների ընտրությունները կատարելուց առաջ բաց քվեարկությամբ ընտրում է ձայները հաշվող հանձնաժողով՝ ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի սահմանած թվով: Ձայները հաշվող հանձնաժողովի անդամներն ընտրում են ձայները հաշվող հանձնաժողովի նախագահ:

Ձայները հաշվող հանձնաժողովի նախագահը քվեարկությունից առաջ պարտավոր է կուսակցական ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի դելեգատներին պարզաբանել փակ (գաղտնի) քվեարկություն կատարելու կարգը:

Ձայները հաշվող հանձնաժողովը փակ քվեարկությունից առաջ պարտավոր է պատրաստել քվեատուփերը և անձամբ կնքել դրանք:

15. Կուսակցական որդանների ընտրությունների ժամանակ փակ (գաղտնի) քվեարկությունը պետք է կատարվի կուսակցական կոնֆերենցիայի, համագումարի դոնփակ նիստում՝ միայն վճռական ձայնի իրավունք ունեցող դելեգատների ներկայությամբ:

Կուսակցական վերադաս դեկավար որդանների ներկայացուցիչներն իրավունք ունեն ներկա լինելու կուսակցական կոնֆերենցիաների, համագումարների, ժողովների թե բաց և թե փակ նիստերին:

16. Վճռական ձայնի իրավունք ունեցող ամեն մի դելեգատ ստանում է կուսակցական որդանի կազմի համար ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի

նշած թեկնածությունների ցուցակի մեկ որինակ։ Կուսակցության անդամի դելեգատական մանդատի վրա կամ Ժողովին, կոնֆերենցիային, համագումարին ներկա գտնվող կուսանդամների ցուցակներում պետք է նշում արվի, թե կուսակցության անդամը քվեարկությանը մասնակցել է։

17. Ամեն մի դելեգատ փակ (գաղտնի) քվեարկության ժամանակ իրավունք ունի թեկնածությունների ցուցակի մեջ ջնջելու առանձին թեկնածուներ կամ կուսակցական ղեկավար որգանի կազմի համար նոր թեկնածուներ ավելացնելու՝ անկախ այն բանից, թե կոնֆերենցիան, համագումարը, Ժողովը քանի հոգուց և սահմանել ընտրելու կուսակցական որգանը։

18. Ձայները հաշվող հանձնաժողովը քվեարկությունից հետո բաց է անում քվեատուփերը և, առանց Ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի չենքից դուրս գալու, հաշվում է քվեարկության արդյունքները՝ կուսակցական որգանների անդամներինն առանձին և կուսակցական որգանների անդամության թեկնածուներինն առանձին։

Ձայները հաշվող հանձնաժողովը պարտավոր է հաշվել ամեն մի թեկնածուին «թեր» և «դեմ» տրված բոլոր ձայներն առանձին-առանձին։

Ձայները հաշվող հանձնաժողովը ձայները հաշվելուց հետո արձանագրություն է կազմում, վորի մեջ մտցնում է քվեարկության արդյունքները՝ ամեն մի թեկնածության վերաբերյալ առանձին, և հանձնաժողովի բոլոր անդամներն ստորագրում են այդ արձանագրությունը։

Այն չենքում, վորտեղ ձայներն են հաշվում, վոչ

վոք իրավունք չունի գտնվելու, բացի ձայները հաշվող հանձնաժողովի անդամներից։

19. Ձայները հաշվող հանձնաժողովը կուսակցական կոնֆերենցիայի, համագումարի, Ժողովի նիստում զեկուցում է քվեարկության արդյունքների մասին՝ ամեն մի թեկնածության վերաբերյալ առանձին։

Կուսակցական որգանի կազմի մեջ ընտրված են համարվում այն թեկնածուները, վորոնք ստացել են ձայների մեծամասնություն, բայց կուսակցական Ժողովին, կոնֆերենցիային, համագումարին վճռական ձայնի իրավունքով ներկա գտնվող ձայների կեսից վոչ պակաս։

20. Փակ (գաղտնի) քվեարկության բոլոր նյութերը (թեկնածուների ցուցակներ, դրավոր հայտարարություններ, ձայների հաշվումները և այլն) պետք է պահվեն կուսակցական որգաններում՝ դաղտնի փաստաթղթերի իրավունքներով։

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄ

20 ոգոստոսի 1939 թ.

Գլավլիտի լիազոր Մ Ն—2863, հրատ. № 733
Պատվեր 184, տիրաժ 15.000
Հանձնված է արտադրության 10/IX 1939 թ.
Ստորագրված է տպագրելու 11/IX 1939 թ.

Գեոհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան, Ցերևան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան
NL1016877

"11 3 1939"
451
1
4456

ИНСТРУКЦИЯ
О ПРОВЕДЕНИИ ВЫБОРОВ РУКОВОДЯЩИХ ПАРТИЙНЫХ ОРГАНОВ

Ереван, 1939